ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

II

ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-78

Գարիկ Աթանեսյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ

ԱՈՒՏԵՆՏԻԿՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ԵՎ ԲԵՄԱԴՐՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՈՒՄ

«*Աուտենտիկ*» զբոսաշրջային փորձառություն ունենալու՝ զբոսաշրջիկների առաջնային ձգտումն իր ազդեցությունն է թողել նաև ետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային միջավայրի փոփոխության գործընթացում: Հայաստանյան մշակութային զբոսաշրջության ոլորտը վերակառուցող հիմնական դերակատարները (պատասխանատու ինստիտուտներ, տուրիստական գործակալություններ, բիզնեսներ, զբոսավարներ և ընդունող համայնքներ) վերջին տասնամյակում սկսել են աուտենտիկ մշակութային ժառանգության նշաններն *ինտեգրել* ներգնա տուրիզմի ուղղությունների և փաթեթներ առաջարկներին՝ զբոսաշրջիկների համար ստեղծելով «բեմադրված աուտենտիկության» զբոսաշրջային փորձառություններ:

Հայաստանյան զբոսաշրջության դաշտի հիմնական դերակատարները միևնույն ժամանակ *աուտենտիկության* փոխարեն կիրառում են հիմնականում «ավանդական» և «ազգային» եզրույթները՝ հայկական զբոսաշրջային օբյեկտները՝ վայրերը և իրադարձությունները ներկայացնելիս: Այսուհանդերձ, հայաստանյան ներգնա տուրիզմի առաջարկը շարունակում է չբավարարել օտարերկրյա զբոսաշրջիկների՝ *աուտենտիկ* զբոսաշրջային փորձառություն ունենալու պահանջարկը:

Վերջին մի քանի տարիներին, հատկապես ռուսաստանցի զբոսաշրջիկների և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ բնակության տեղափոխված ռուս զբոսաշրջության ոլորտի մասնագետների, ժամանցային բլոգերների ու զբոսավարների ակտիվ ջանքերով, հայաստանյան զբոսաշրջային միջավայրում ակտիվացել է *աուտենտիկության* խոսույթը: Այս մասնագետները սկսել են ակտիվ դերակատարում ստանձնել Հայաստանի ներգնա տուրիզմի փոփոխման գործընթացում՝ առաջնային տեղ հատկացնելով աուտենտիկ զբոսաշրջային փորձառությանը:

Հոդվածի հիմնական նպատակն է՝ հայաստանյան մշակութային զբոսաշրջությունը ձևակերպող դերակատարների գործունեության համատեքստում դիտարկել «*աուտենտիկության*» *խոսույթը*:

Հիմնաբառեր՝ զբոսաշրջիկ, մշակութային զբոսաշրջություն, աուտենտիկություն, աուտենտիկ փորձառություն, բեմականացվող ժառանգություն, պրակտիկա, դերակատար:

Ներածություն

Դ. Մըկքաննելի կողմից «բեմադրված *աուտենտիկության*» հասկացությունը զբոսաշրջության ակադեմիական *խոսույթ* ներկայացվելուց հետո (1976 թ.) «*աուտենտիկության*» հայեցակարգն առանցքային դեր է ստանձնել զբոսաշրջության ուսումնասիրման սոցիոլոգիական և մարդաբանական մոտեցումներում: Մըկքաննելին հաջորդած ակադեմիական ակտիվ քննարկումների

շնորհիվ այս հայեցակարգը մեկնաբանվել և վերիմաստավորվել է տարբեր ձևերով՝ հիմնականում անդրադառնալով *առուրենտիկության* բնույթին[1], նրա կառուցմանը[2] և *պրակտիկաներին*[3]:

Վերջին հիսուն տարում զբոսաշրջիկները սկսել են ստանդարտացված զբոսաշրջային առաջարկների փոխարեն նախընտրություն տալ յուրահատուկ ու տարբերվող զբոսաշրջային փորձառություններին, ինչի արդյունքում զբոսաշրջային գրեթե բոլոր ուղղությունները սկսել են ստեղծել և զբոսաշրջիկներին առաջարկել աուտենտիկ զբոսաշրջության *տուրեր:* Նմանօրինակ *պրակտիկաները* շատ հաճախ կարող են վտանգավոր լինել զբոսաշրջային փորձառության թիրախ հանդիսացող մշակութային ժառանգության օբյեկտի համար. *առուրենտիկ* փորձառության նկատմամբ զբոսաշրջիկների մեծ պահանջարկը հանգեցրել է ապրանքային, ոչ-իսկական մշակութային տարրերի արտադրմանը. առարկաները և ծեսերը, որոնք ժամանակին ստեղծվել են տեղական սպառման համար, աստիճանաբար մղվում են զբոսաշրջության սպառման շուկա և հետևաբար շահագործվում, խեղաթյուրվում և մանրացվում[4]: Նման ապրանքայնացումը կարող է դիտարկվել որպես տեղային մշակութային արտադրանքի և հարաբերությունների *առուրենտիկության* վերացում և տանել հատուկ արտաքին սպառողների համար ստեղծված «բեմադրված» կամ «կեղծ» փորձառությունների[5]:

Առուրենտիկ զբոսաշրջության *խոսույթից* անմասն չի մնացել նաև հայաստանյան զբոսաշրջային միջավայրը, որը հատկապես վերջին տասնամյակում, նկատելով զբոսաշրջային արդի գործընթացները, փորձեր է կատարում իր գործող մշակութային զբոսաշրջության առաջարկը հարմարեցնել *առուրենտիկ* զբոսաշրջային փորձառություն փնտրող զբոսաշրջիկների պահանջարկին: Սակայն *առուրենտիկ* զբոսաշրջային փորձառության առաջարկը ՀՀ զբոսաշրջային միջավայրի դերակատարները (պատասխանատու ինստիտուտներ, զբոսաշրջային գործակալություններ, բիզնեսներ, զբոսավարներ և ընդունող համայնքներ) ներգնա տուրիզմի ուղղություններում և փաթեթներում սահմանում և ներկայացնում են «ավանդական» և «ազգային» (հայկական ավանդական խոհանոց, ազգային երգ ու պար ևն) եզրույթներով: Սակայն թագավարակից և հատկապես ռուս-ուկրաինական պատերազմից հետո հայաստանյան զբոսաշրջային միջավայրը վերակառուցող նոր դերակատար է հայտնվել՝ ի դեմս ռուս *ռելոկանտների* և ժամանցային ինտերնետ բլոգերների: Նոր դերակատարը ոչ միայն փորձում է վերասահմանել *առուրենտիկ* զբոսաշրջային փորձառությունը հայաստանյան զբոսաշրջային միջավայրում, այլև սկսել է առաջարկել այլընտրանքային զբոսաշրջային ուղիներ՝ հայկական մշակութային

1 Olsen 2002, 159-182.

2 Crang 1996, 415-431.

3 Lau 2010, 478-498.

4 Young 2020, 276-296.

5 Chhabra et al. 2003, 709-719.

ժառանգությունը բացահայտելու համար՝ վիճարկելով տեղային դերակատարների հեղինակությունը:

Այս աշխատանքն իր առջև խնդիր չի դրել տալու *առաջնորդության* սահմանումը, այլ փորձ է կատարում պարզելու, թե ո՞ւմ է անհրաժեշտ *առաջնորդությունը* ու ի՞նչ նպատակներով, և թե ովքե՞ր են օժտված այն սահմանելու իրավասությամբ: Ուստի այս խնդիրները դիտարկել եմ *առաջնորդության կոնստրուկտիվիստական* մոտեցումների շրջանակում՝ դիտարկելով ոչ թե որպես էթնոմշակութային օբյեկտի որակ, այլ որպես սոցիալական գործընթացներում շարունակաբար ձևավորվող և փոխակերպվող գնահատման կատեգորիա[6]: Հետազոտության հիմնական հարցերը դիտարկվել են նաև Դ. Մըկքանելի «բեմադրված *առաջնորդություն*» հայեցակարգի և «*առաջնորդացման*» գործընթացն ուսումնասիրող մոտեցումների շրջանակում:

Հետազոտության նյութերը ձեռք են բերվել խորացված ու փորձագիտական հարցազրույցների միջոցով. խորացված հարցազրույցներ են անցկացվել ռուս զբոսաշրջիկների (19 հարցազրույց) ու բլոգերների (6 հարցազրույց) հետ, փորձագիտական հարցազրույցներ՝ ՀՀ զբոսաշրջության ոլորտի մասնագետների (4 հարցազրույց) ու գործարարների (5 հարցազրույց) հետ: Զբոսաշրջության ոլորտին վերաբերող զանազան *ֆորումների*, բլոգերների ու զբոսաշրջիկներին ուղղորդող կայքերի նյութերը ենթարկվել են բովանդակային և *խոսույթ* վերլուծության:

Աուտենտիկությունը և «բեմադրված» ժառանգությունը

Սույն հոդվածում *առաջնորդությունը* սահմանվում է որպես սոցիոմշակութային խմբերի ավանդական մշակութային գծերի իսկականության, ոչ-կեղծ լինելու վերաբերյալ պատկերացումների համակարգ, որի հիման վրա կատարվում են նրանց ինքնության ներկայացումն ու վերարտադրությունը[7]: *Առաջնորդիկ* փորձառության նկատմամբ զբոսաշրջիկների մեծ պահանջարկը վերջին մի քանի տասնամյակում հանգեցրել է մշակութային ժառանգության ապրանքայնացման ու *առաջնորդության* նշաններով բեմադրված *առաջնորդիկ* փորձառության *պրակտիկաների* հանդես գալուն:

Մը՛քանելի առաջարկած «բեմադրված աուտենտիկություն» մոտեցման համաձայն՝ աուտենտիկ իրականությունը կառուցված է սոցիալական տարածության տեսքով, որտեղ հստակորեն սահմանվում են «բեմը» և «ետնաբեմը», որոնց գործառույթը հյուրընկալող համայնքի և զբոսաշրջիկների իրականությունները տարանջատելն է[8]: «Բեմը» ՀՀ այցելող զբոսաշրջիկներին ներկայացվող զբոսաշրջային ուղիներն են, այցելուներին ներկայացվող տեսարժան վայրերն ու զբոսաշրջային ժամանցավայրերը, որոնք բանակցվել և սահմանվել են ՀՀ զբոսաշրջության ոլորտի դերակատարների կողմից (պատասխանատու

6 Соловьева 2009, 138:

7 Соловьева 2009, 137.

8 MacCannell 1973, 590-591.

ինստիտուտներ, տուրիստական գործակալություններ, բիզնեսներ, զբոսավարներ և ընդունող համայնքներ):

Այնուամենայնիվ, ամեն անգամ զբոսաշրջային վայր այցելելիս՝ զբոսաշրջիկները ձգտում են հայտնվել «ետնաբեմում»՝ հյուրընկալող համայնքի բնական, առօրյա միջավայր, որը նրանք ընկալում են որպես *առպենպիկ*: Մեկնաբանելը զբոսաշրջային տարածքը նկարագրում է որպես շարժում «բեմից» դեպի «ետնաբեմ», որտեղ «բեմը» ներկայացնում է զբոսաշրջային տարածքը, որը զբոսաշրջիկները ակնկալում են տեսնել, իսկ «ետնաբեմը» հայտնվում է որպես օժանդակ տարածք՝ թաքնված նրանց աչքերից[9]: Զբոսաշրջության ոլորտի աշխատողները զբոսաշրջիկներին թույլ են տալիս «այցելել ետնաբեմ»՝ զարդարելով զբոսաշրջային տարածքը զբոսաշրջիկների մուտքի գոտուց դուրս գտնվող տարրերով, կամ մասամբ/ամբողջությամբ բացելով տուրիստական տարածքի այդ հատվածը[10]: Այսպիսով, *առպենպիկության* ծարավը զբոսաշրջիկը «հագեցնում է» ետնաբեմի նշանների օգնությամբ. նմանօրինակ *պրակտիկայի* վառ օրինակ է լավաշ թխելու գործընթացի *ինտեգրումը* զբոսաշրջային տարածությանը (օրինակ՝ որոշ ռեստորաններում կամ Ապարան քաղաքում գտնվող «Գնթունիկ» սուպերմարկետում):

Տուրիստական գործակալություններն ու տուր-օպերատորները, ինչպես նաև անհատ զբոսավարները, որոնք խմբեր են ընդունում արտերկրից, առաջարկում են Հայաստանն ու հայ մշակութային ժառանգությունը բացահայտելու նմանատիպ ուղիներ, որոնք ներառում են նմանօրինակ ներգնա տուրեր: Ժամանակի ընթացքում, սակայն, նկատում ենք, որ զբոսաշրջիկների պահանջարկից ելնելով՝ գործակալություններն իրենց փաթեթներում սկսեցին ավելացնել *առպենպիկ* փորձառության *մարկերներ*՝ լավաշի թխման արարողության դիտում կամ մասնակցություն, գորգագործության ընթացքին հետևում կամ մասնակցություն, գինեգործության գործընթացին մասնակցություն, գյուղական նախաճաշի կամ ընթրիքի համտեսում, ազգային երգ ու պար հայկական խոհանոց մատուցող ռեստորաններում ևն: Երբեմն ականատես ենք լինում վերոնշյալ ավանդական պրակտիկաների *մարկերների ինտեգրման* ռեստորանների, պանդոկների և հյուրատների:

Նմանօրինակ *պրակտիկայի* ամենանշանավոր օրինակին է վերաբերում Երևանի կենտրոնում կառուցվող «Հին Երևան» նախագիծը: Կառավարության 2016 թ. փետրվարի 25-ի նիստում Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշմամբ Երևանի կենտրոնից կվերանա ներկա բնակելի ֆոնդը և գլխավոր պողոտայի վերոնշյալ տարածքում հնարավոր կլինի վերականգնել «Հին Երևան» ծրագրով նախատեսվող պատմաճարտարապետական միջավայրը. նախագծով նախատեսվում է կառուցել բնակելի-առևտրային

9 MacCannell 1973, 591-592.

10 Карелина 2021, 139.

թաղամաս՝ տեղում պահպանված 14 հուշարձան-շենքերի հետ մեկտեղ, որոնք պահպանվում և վերականգնվում են իրենց ծավալատարածական և հատակագծային լուծումներով, թաղամասը կհամալրվի նաև վերջին տարիներին քանդված կամ ապամոնտաժված ևս 7 այլ պատմական շենքերով, որոնք, նախորդ տարիներին ընդգրկվելով տեղափոխման պետական ցուցակի մեջ, ապամոնտաժվել էին՝ տեղը զիջելով նորակառույց բարձրահարկերի կառուցապատմանը: Ծրագիրը միտում ունի վերակառուցելու հին Երևանին բնորոշ միջավայր՝ երկհարկանի տներով, բակերով, փայտե պատշգամբներով, մառաններով (19-րդ դարի երևանյան կոլորիտային միջավայր):

Այս նախագիծն արժանացավ ուժեղ քննադատության տեղի մասնագետների, հանրային գործիչների և քաղաքացիների կողմից՝ քաղաքի առևտրայնացման, պատմական հիշողության աղավաղման պատճառաբանությամբ: Մասնագետները մեղադրեցին քաղաքային իշխանություններին՝ հին Երևանը քանդելով «Հին Երևան» նախագիծը կառուցելու անհեթեթ որոշման համար: Սակայն Երևանի *առուբենտիկ* միջավայրի աղավաղման ու քաղաքի *վերնակուլյար* մշակույթի վերացման այդ ծրագիրը զարմանալիորեն քննադատության արժանացավ ՌԴ-ից ՀՀ բնակության տեղափոխված գիտնականների, արվեստագետների, բլոգերների, զբոսաշրջության ոլորտի մի շարք մասնագետների կողմից:

ՀՀ ժամանող զբոսաշրջիկների *առուբենտիկ* փորձառություն ստանալու պահանջարկը հատկապես վերջին տասնամյակում նպաստեց *առուբենտիկություն* հասկացության վերիմաստավորմանը՝ հայաստանյան զբոսաշրջային միջավայրում: Այս խոսույթի կարևորագույն դերակատար դարձան հատկապես ռուսաստանցի զբոսաշրջիկները: Դեռ ավելին, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ-ում հայտնված մեծաթիվ ռուս *ռելոկանտները*, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում զբոսաշրջության ոլորտի մասնագետները, ժամանցային բլոգերները, սկսեցին ակտիվ մասնակցություն ունենալ ՀՀ զբոսաշրջային միջավայրի փոփոխման գործում: Բացի այն, որ ռուս բլոգերները սկսել են ակտիվորեն նախաձեռնել հայաստանյան զբոսաշրջային և ժամանցային գրավչությունների գնահատում և ներկայացում իրենց համերկրացիների և ապագա զբոսաշրջիկների համար, նրանց սկսել են իրենց գովազդային արշավներում ներգրավել նաև լոկալ բիզնեսները՝ տեղի և ռուս զբոսաշրջիկների համար ներկայացնելով իրենց բիզնեսը՝ օգտագործելով հեղինակավոր և բազմաթիվ հետևորդներ ունեցող այս բլոգերներին:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՀ զբոսաշրջային միջավայրի ձևակերպման այս նոր դերակատարը սկսում է *առուբենտիկ* փորձառությունը կարևոր գործոն համարել Հայաստանում զբոսաշրջային և ժամանցային վայրերի գնահատման գործում: Նոր դերակատարը սկսում է վիճարկել ՀՀ զբոսաշրջային ավանդական ուղիները և ժամանցավայրերը՝ առաջարկելով այլ ուղղություններ, որոնք կարող են բավարարել զբոսաշրջիկների աուտենտիկ փորձառության պահանջարկը. Երևանի *վերնակուլյար* ժառանգությունը բացահայտող տուրերից բացի, այս նոր դերակատարը սկսում է վերագնահատել

նաև *առաջնային* հայկական խոհանոց առաջարկող ռեստորանները, կազմակերպվող ամենամյա փառատոները, միջոցառումները, ժամանցավայրերը:

Սակայն հարց է առաջանում, թե արդյոք այս նոր դերակատարն ունի՞ հայաստանյան զբոսաշրջային փորձառությունը «*առաջնայինացնելու*» իրավասություն, ո՞վ է տալիս այդ իրավասությունը, և հնարավո՞ր է արդյոք այն վիճարկել:

Աուտենտիկության քաղաքականությունը

«*Աուտենտիկություն*» հասկացության մեկնաբանությունների բազմազանությունը, որը տեղ է գտել ժամանակակից սոցիալական գիտություններում, թույլ է տալիս հետազոտողներին վերլուծել և նկարագրել ոչ այնքան մշակութային օբյեկտների իրական և արհեստականորեն «հորինված» բնութագրիչների ամրագրված տարբերությունները, որքան «իսկականության» որակի ձեռքբերման կամ կորստի դինամիկ սոցիալական գործընթացները՝ մեծացնելով հետազոտողների կողմից լուծվող սոցիոմշակութային խնդիրների շրջանակը:

«*Աուտենտիկացման*» գործընթացը քննարկող սոցիոլոգիական և մարդաբանական մոտեցումներում առաջնային են այն հարցերը, թե ովքե՞ր են մշակութային օբյեկտները սահմանում որպես *առաջնային*, ի՞նչ նպատակ են հետապնդում[11], և ինչպե՞ս են նրանք ստանում այդ իրավասությունը[12]: «*Աուտենտիկացումը*» չեզոք ընթացակարգ չէ, այլ ենթակա է հակասությունների և վիճարկման ինչպես ցանկացած այլ գործընթաց, որը ստեղծում է խորհրդանիշներ. այն ենթակա է շահերի բախման և հետևաբար ներգրավված է քաղաքական գործընթացում[13]:

«*Աուտենտիկացման*» գործընթացը այս աշխատանքում ես դիտարկում եմ Էրիկ և Սքոթ Կոհենների կողմից քննարկվող «սառը» և «տաք» *աուտենտիկացման* մոտեցման շրջանակում: «Սառը» *աուտենտիկացումը* սահմանվում է որպես բացահայտ, ֆորմալ, երբեմն նույնիսկ պաշտոնական իրադարձային գործընթաց, որի միջոցով ինչ-որ բան՝ ապրանքը, վայրը, օբյեկտը կամ իրադարձությունը, հաստատվում է որպես «բնօրինակ», «իսկական», «իրական» կամ «վստահելի»[14]: «Սառը» *աուտենտիկացման* գործողությունները կարող են հիմնված լինել ակադեմիական գիտելիքի, փորձագիտական կարծիքի, անձնական գիտելիքների կամ աստվածային ոգեշնչման վրա: Բայց կարևոր է նշել, որ սառը *աուտենտիկացումը* արդյունավետ կլինի միայն այն դեպքում, եթե այն գործարկվի *աուտենտիկացման* գործողությունն իրականացնող նույնականացվող դերակատարի միջոցով, ով իրավասու է նման գործողություններ իրականացնելու՝ շնորհիվ անձնական խարիզմայի, ինստիտուցիոնալ դիրքի, արտոնյալ գիտելիքի կամ սոցիալական կամ կրոնական կարգավիճակի[15]:

11 Ateljevic 2005, 1-17:

12 Noy 2009, 112-129:

13 Bruner 20o5, 150:

14 Cohen, Cohen 2012, 1298:

15 Cohen, Cohen 2012, 1299:

Վերոնշյալ մոտեցման համաձայն՝ զբոսաշրջային ժամանցավայրերի աուտենտիկացման իշխանությունը հիմնականում գալիս է վերևից՝ որևէ ազգային կամ միջազգային կազմակերպության կողմից: Նմանօրինակ իշխանության ամենավառ օրինակը ՅՈՒՆԵՍԿՕ-ն է, որը *հեգեմոն* դիրք է ստացել բնության և մշակութային ժառանգությունը որպես համաշխարհային ժառանգության վայրեր *աուտենտիկացման* գործընթացում: Մյուս դեպքերում զբոսաշրջային ժամանցավայրերի *աուտենտիկացման* իշխանությունը գումարվում է ազգային կառավարությունների ձեռքերում, որոնք այն հիմնականում իրականացնում են վերից վար սկզբունքով՝ նվազ ուշադրություն դարձնելով տեղային կարծիքներին[16]: Երբեմն ժառանգության *աուտենտիկացման* իշխանությունը կարող է բանակցվել կառավարության, տեղային համայնքների, զբոսաշրջային բիզնեսների միջև[17]:

Ետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային միջավայրում ականատես ենք եղել նմանատիպ բանակցության՝ տուրիստական հիմնական դերակատարների միջև, որը ժամանակի ընթացքում ներառել է նաև ավանդական և ազգային մշակութային ժառանգության նշանների ինտեգրացիան սահմանված մշակութային զբոսաշրջության ուղիներում և փաթեթներում: Այնուամենայնիվ, տեսնում ենք, որ *աուտենտիկացման* նման գործողությունները պարտադիր չէ, որ հանգեցնեն *կոնսենսուսի:* Ավելի շուտ նրանք հաճախ բաց են քննադատության, դիմադրության, հակասությունների կամ բանակցությունների համար: Սրա վառ ապացույցը Ռուսաստանից ժամանած նոր դերակատարի ի հայտ գալն է, որի հայաստանյան մշակութային զբոսաշրջության *աուտենտիկացման* պրակտիկաները տեղավորվում են արդեն «տաք» *աուտենտիկացման* մոտեցման շրջանակում:

«Տաք» *աուտենտիկացումը* օբյեկտի, վայրի կամ իրադարձության *աուտենտիկության* ստեղծման, պահպանման և ընդլայնման *իմմանենտ,* կրկնվող, ոչ-պաշտոնական կատարողական գործընթաց է: Սա սովորաբար անանուն գործընթաց է և չունի ընդհանուր առմամբ ճանաչված *աուտենտիկացման* գործակալ: «Տաք» աուտենտիկացման գործընթացը խիստ զգայական է և հիմնված է ավելի շուտ համոզմունքների վրա, քան ապացույցների, և հետևաբար մեծապես ազդված չէ արտաքին քննադատությունից[18]:

ՀՀ տեղափոխված ռուս բլոգերները, ժամանակի ընթացքում ծանոթանալով հայաստանյան զբոսաշրջության առաջարկներին, այն սկսում են մեկնաբանել որպես բեմադրված աուտենտիկության *պրակտիկաներ* և փորձ են կատարում վերիմաստավորել հայկական մշակութային ժառանգությունը իրական աուտենտիկ փորձառության համատեքստում: Նրանք ոչ միայն վերագնահատում են առկա զբոսաշրջային և ժամանցային վայրերն ու իրադարձությունները, այլև սկսում են առաջարկել այլընտրանքային զբոսաշրջային

16 Cohen, Cohen 2012, 1307:

17 Xie 2011, 99:

18 Cohen, Cohen 2012, 1300:

ուղիներ՝ ՀՀ-ում աուտենտիկ զբոսաշրջային փորձառություն ունենալու համար:

ՀՀ տուրիստական գործակալությունների և Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվող՝ Երևանը բացահայտելու զբոսաշրջային փաթեթները վերոնշյալ զբոսաշրջային այլընտրանքի ամենավառ օրինակն են: Տեղային դերակատարները Երևանի զբոսաշրջային փորձառության նշաններ են սահմանել օպերայի շենքը, «Կասկադ» համալիրը, Ազգային ժողովի շենքը, Հանրապետության հրապարակը, Աբովյան փողոցը, Մաշտոցի և Բաղրամյան պողոտաները, Հյուսիսային պողոտան, Արարատի կոնյակի գործարանը, «Հրազդան» մարզադաշտը, «Ռոսիա» կինոթատրոնը, Ս. Սարգիս եկեղեցին, Երևանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատը, Երևանի քաղաքապետարանն ու Երևանի պատմության թանգարանը: Նոր դերակատարը Երևանի իրական *աուտենտիկ* փորձառություն ունենալու համար առաջարկում է այցելել *վերնակուլյար* քաղաք (Կոնդ, Ֆիրդուսի, Հին Նորք, Քանաքեռ), որտեղ հնարավոր կլինի տեսնել իրական տեղական ու կոլորիտային քաղաքը:

Եթե տեղական զբոսաշրջային դերակատարներն առաջարկում են հայկական *աուտենտիկ* խոհանոցի ու լավաշ թխելու գործընթացի փորձառությունը ստանալ ռեստորաններում, գինու պատրաստմանը կամ գորգագործությանն ականատես լինել գործարաններում, ապա նոր դերակատարը կազմակերպում է տուրեր ՀՀ գյուղերում, որտեղ բոլոր այդ փորձառությունները զբոսաշրջիկը կարող է ստանալ ավանդական *աուտենտիկ* միջավայրում:

Հակառակ այն փաստին, որ հայաստանյան զբոսաշրջության վերաձևակերպման նոր դերակատարը չունի այն *աուտենտիկացնելու* ակադեմիական, պաշտոնական, կրոնական կամ ծիսական իրավասություն, սակայն նա ակտիվորեն մեծ իշխանություն է ձեռք բերում ոլորտում փոփոխություններ կատարելու հարցում: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ում ներկայում վերաբնակվել են տասնյակ հազարավոր ռուսներ, իսկ ՌԴ-ից ժամանող զբոսաշրջիկները կազմում են ՀՀ ժամանող զբոսաշրջիկների մեծ հատվածը. նրանք հիմնականում վստահում են իրենց հայրենակից մասնագետների և բլոգերների գնահատականին:

Դեռ ավելին, վերջին շրջանում ՀՀ-ում ժամանցային զբոսաշրջության ոլորտում ընտրություն կատարելու հարցում այս դերակատարին սկսել են նախընտրություն տալ նաև ՀՀ քաղաքացիները, ինչը երևում է սոցիալական ցանցերում նրանց ակտիվ մեկնաբանություններով: Նրա նորահայտ իշխանությունն ընդունելով՝ ՀՀ զբոսաշրջային և ժամանցային կազմակերպությունները սկսել են ռուս բլոգերներին ներգրավել սեփական գովազդային և մարքեթինգային արշավներում՝ նրանց օժտելով հայաստանյան զբոսաշրջային փորձառությունը *աուտենտիկացնելու* իրավասությամբ: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այս նոր դերակատարի *աուտենտիկացման* իշխանությունը «տաք» *աուտենտիկացման* գործընթաց է, և այն կարող են վիճարկել իրավասու դերակատարները, կամ էլ այն կկորցնի իր ազդեցությունը՝ կորցնելով ՌԴ զբոսաշրջիկների քանակը կամ վստահությունը:

Եզրահանգումներ

Առպենտիկ փորձառության նկատմամբ զբոսաշրջիկների մեծ պահանջարկը վերջին տասնամյակում հայաստանյան զբոսաշրջային միջավայրում հանգեցրել է բեմադրված *առպենտիկ* փորձառությունների *ինտեգրման պրակտիկաների*՝ տուրիստական գործակալությունների և տուր-օպերատորի կողմից առաջարկվող ներգնա տուրիզմի ավանդական ուղղություններում և փաթեթներում: *Առպենտիկ* զբոսաշրջային փորձառությունը ՀՀ զբոսաշրջային ոլորտը սահմանող հիմնական դերակատարների կողմից մեկնաբանվում և ներկայացվում է հիմնականում «ավանդական» և «ազգային» եզրույթներով:

Սակայն տեսնում ենք, որ զբոսաշրջիկների միայն աճող ցանկությունը *առպենտիկ* զբոսաշրջային փորձառություն ունենալու, հայկական մշակութային զբոսաշրջության ետնաբեմ այցելելու միտումը և ՀՀ զբոսաշրջության դաշտում աուտենտիկությունը զբոսաշրջային ոլորտում կարևորող նոր դերակատարի հանդես գալը սկսում են աուտենտիկության հիմնախնդիրը շրջանառել հայաստանյան տուրիստական խոսույթում:

ՌԴ-ից ժամանած զբոսաշրջության ոլորտի մասնագետները, զբոսավարներն ու ժամանցային բլոգերները սկսում են իշխանություն ստանալ հայկական մշակութային զբոսաշրջության գնահատման ու աուտենտիկ փորձառության սահմանման գործընթացում: Այս նոր դերակատարի՝ ՀՀ մշակութային զբոսաշրջության աուտենտիկացման գործընթացում դերակատար հանդես գալու իրավասությունը պայմանավորված է ինչպես ՀՀ-ում բնակվող մի քանի տասնյակ հազար ռուսաստանցիների ու ՌԴ-ից ՀՀ ժամանող մեծաքանակ զբոսաշրջիկների կողմից նրանց կարծիքի կարևորմամբ, այնպես էլ ռուս զբոսաշրջիկների մեծ հոսքերից եկամուտ հետապնդող հայաստանյան բիզնեսի կողմից այդ դերակատարի հետ համագործակցությամբ:

Այս դերակատարը վերջին տարիներին ակտիվորեն սկսել է վերաձևակերպել հայաստանյան զբոսաշրջային խոսույթը, սահմանել հայկական մշակութային զբոսաշրջության այլընտրանքային ուղիներ ու վիճարկել հայաստանյան զբոսաշրջային դաշտը ձևակերպող դերակատարների իշխանությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրություններ

КАРЕЛИНА 2021
Карелина А., (Не)аутентичные туристические достопримечательности: как китайские туристы воспринимают российский «фейклор», Социологическое обозрение, Т. 20. №2, 2021, 138-156

СОЛОВЬЕВА 2009
Соловьева А. Н., Концептуализация аутентичности в контексте глобализации культуры, Вестник Северного (Арктического) федерального университета. Серия: Гуманитарные и социальные науки, 2009, 137-141:

ATELJEVIC 2005
Ateljevic I. Doorne S., Dialectics of authentication: Performing 'exotic otherness' in a backpacker enclave of Dali, China. Journal of Tourism and Cultural Change, 3(1), 2005, 1-17.

BRUNER 2005
Bruner E., Abraham Lincoln as authentic reproduction. In E. Bruner (Ed.), Culture on tour, Chicago: University of Chicago Press, 2005, 145-168.

CHHABRA, HEALY, SEALS 2003
Chhabra D., Healy R., Seals E., Staged authenticty and heritage tourism, Annals of Tourism Research, Vol. 30, No. 3, 2003, 702-719.

COHEN 2012
Cohen E., Cohen S., Authentication: Hot and Cool. Annals of Tourism Research. 39, 2012, 1295-1314.

CRANG 1996
Crang M., Magic kingdom or a Quixotic quest for authenticity? Annals of Tourism Research, 23(2), 1996, 415–431.

LAU 2010
Lau R.W.K., Revisiting authenticity: A social realist approach. Annals of Tourism Research, 37(2), 2010, 478–498.

MACCANNELL 1973
MacCannell D., Staged authenticity: Arrangements of social space in tourist settings. American Journal of Sociology, 79(3), 1973, 589-603.

NOY 2009
Noy C., The politics of authenticity in a national heritage site in Israel. Qualitative Sociology Review, 5(1), 2009, 112-129.

OLSEN 2002
Olsen K., Authenticity as a concept in tourism research, Tourist Studies 2(2), 2002, 159–182.

XIE 2011
Xie P.F., Authenticating ethnic tourism. Bristol: Channel View Publications, 2011, 288.

YOUNG 2020
Young M., Markham F., Tourism, capital, and the commodification of place. Progress in Human Geography, 44 (2), 2020, 276-296.

Garik H. Atanesyan
PhD

AUTHENTICITY DISCOURSE AND STAGED HERITAGE IN POST-SOVIET ARMENIAN TOURISM PRACTICES

Keywords: tourist, cultural tourism, authenticity, authentic experience, staged heritage, practice, agent.

This paper examines the authenticity discourse and "staged" heritage tourism practices in post-Soviet Armenia. In the last decade, key agents in Armenian cultural tourism sector have begun to integrate authentic cultural heritage markers into local tourism destinations, creating "staged" authentic tourism experiences for tourists. However, Armenia's local tourism offering continues to fall short of foreign tourists' demand for an authentic tourism experience. In the last few years, especially due to the active efforts from Russian tourists and Russian tourism ex-

perts, entertainment bloggers and tour guides who relocated to the Republic of Armenia as a result of the Russian-Ukrainian war, the authenticity discourse has been activated in the Armenian tourism space. These agents have begun to take an active role in the process of rethinking Armenia's local tourism, giving priority to the authentic tourist experiences.

Гарик Г. Атанесян

к.и.н.

ДИСКУРС АУТЕНТИЧНОСТИ И ПОСТАНОВОЧНОЕ НАСЛЕДИЕ В ПОСТСОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ТУРИСТИЧЕСКОЙ ПРАКТИКЕ

Ключевые слова: турист, культурный туризм, аутентичность, аутентичный опыт, постановочное наследие, практика, агент.

В статье рассматривается дискурс аутентичности в контексте туристических практик постсоветской Армении. В последнее десятилетие ключевые агенты армянского сектора культурного туризма начали интегрировать аутентичные маркеры культурного наследия в местные туристические направления, создавая для туристов «постановочный» аутентичный туристический опыт. Однако предложение местного туризма в Армении по-прежнему не соответствует спросу иностранных туристов на аутентичный туристический опыт. В последние несколько лет, особенно благодаря активным усилиям российских туристов, российских экспертов по туризму, развлекательных блоггеров и гидов, переехавших в Республику Армения в результате российско-украинской войны, дискурс аутентичности по-новому активизировался. Эти агенты начали играть активную роль в процессе переосмысления местного туризма в Армении, отдавая приоритет аутентичнему туристическому опыту.

Ներկայացվել է՝ 28.02.2024
գրախոսվել է՝ 23.07.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6